

ՆՈՒԵՐ ՄԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՔՐԻԿԻՆ

« Անան Սալոն »-ին մէջ ի յոյց դրուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս երեմեան Հայրեկին կ'սարձանը, գործ Պ. Տէր-Մարութեանցի, Հայ անձնաւորութիւն մը մտադիր էր գնել այդ գեղեցիկ աշխատութիւնը: Բայց Փարիզացիները մը Հայեր սիրուն գաղափարն ունեցած են ժողովրդական հանգանակութեամբ մը զայն գնելով եւ անոր պղծել վերադադրութիւնը յօրինել տալով՝ փարիզեան Պարպարէն ծանօթ տան ձեռքով, նուիրել մեր ամենասիրելի Կաթողիկոսին, իրբեւ երախտագիտութեան ու հիացման արտայայտութիւն մը արտասանմանի հայ գաղութներուն կողմէ իր ութսունեւհինգամեակի անուան տարեդարձին առթիւ: Այս գաղափարն իրականացնելու համար, կազմուած է Յանձնախումբ մը, որու Ատենապետ ընտրուած է Պ. Միհրան Յովակիմեան, Ատենադպիր՝ Պ. Կ. Փէշիկլանեան եւ Գանձապահ՝ Պ. Զ. Զօրայեան: Անտարակոյն եւք որ արտասանմանի բոլոր Հայերը խանգաւառութեամբ պիտի մասնակցին այս հանգանակութեան:

Գումարները պէտք է զրկուին Յանձնախումբի Գանձապահ Պ. Զ. Զօրայեանի,

4, Rue de Châteaudun

Paris

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂՈՒՆԻՒՆ. — Ս. Ղազարու վանքն այս օրերս ի լոյս ընծայած է նոր թիւ մը իր քանի մը տարիէ ի վեր հիմնած գեղարուեստական թերթին՝ Գեղունիկին: Այս թիւը կը գերազանցէ, (ոչ գրական բովանդակութեամբ, որ աւելի ուժեղ էր վերջին թիւին մէջ, այլ արուեստի ճախութեամբ ու գեղեցկութեամբ) մինչև ցարդ լ'յս տեսածները, որոնք սակայն նոյնօրինակ եւրոպական հրատարակութեանց մէջ առաջնակարգ տեղ բռնելու չափ չբերէ էին:

Գեղունիին նոր թիւը կը պարունակէ Ա. Անաթոնեանի գրական գործունէութեան մասին յօդուած մը՝ Լէօի, Փրանսագի առաջախօսներէ քաղուած քսան առակներու հայերէն թարգմանութիւն՝ Մ. Նուպարեանի, Ահարարկ մը Պարսկաստանի Հայերու անցելիքին վրայ՝ Հ. Առաքելեանի, յօդուած մը Ռեհրանի աղգային վարչարաններուն վրայ՝ Մ. Զառաֆեանի, Անտոն Ռոզդա նկարչին վրայ յօդուածի մը թարգմանութիւն՝ Հ. Փ. Եսափեանի, Սաթմեհի (ողբերգութիւն) Հ. Երեմեանի, պոռոյ մը Նախապետի մէջ՝ Հ. Փ. Եսափեանի, յօդուած մը Սինանեան երաժշտին վրայ՝ Հ. Ն. Տիրացուեանի, Վիթթորիա Աղանտի քանի մը բանաստեղծութեանց թարգմանութիւն՝ Հ. Ա. Ղազիկեանի, Նկարները բազմաթիւ են եւ հոյակապօրէն վերաբերուած. հաճոյքով կը նկատենք որ անոնց մեծագոյն մասը կը բռնեն իտալացի ամենամեծ արուեստագէտներու. (Ռաֆայէլ, Դորրեմանի, Միքէլ-Անճէլո, Փալմա Վեքքի, Կիրլանտայո, Տոմինիքո, Քիլիկոյո, Տրա Ֆիլիպիո Լիւփի, Պոնտիս, Տրա Պէտրո Անճէլիս, եւն.) յորմերը, — ինչպէս եւ Պ. Պ. Ա. Ահարոնեանի, Վ. Մախոյեանի լուսանկարները, այլեւայլ տեսարաններ, բնանկարներ, եւն. եւն:

Ս. Ղազարու Միաբանութիւնը որոշած է, ինչպէս ծանօթ է ամենուն, այդ հրատարակութեան զուտ հասոյթը յատկացնել Հայաստանի որդանոցներուն: Նախարարին մէջ Հ. Երեմեան կը գանգատի այն մեծ անտարբերութիւնն — կամ գէթ այն չափազանց գաղջ համակրութիւնն, — զոր հայ հասարակութիւնը ցարդ յոյց տուած է հանդէպ այս գեղարուեստական-բարեգործական ձեռնարկին: Այդ անտարբերութիւնը ծանրապէս դատապարտելի է արդարեւ: Այդ հրատարակութիւնը պէտք է գտնուի քիչ չափ ճաշակ ունեցող, կամ գէթ քիչ մը սիրտ ունեցող ամէն Հայու սալոնին մէջ:



Le Gérant: FREDERIC MACLER

H. D. DOGHRAHADJIAN
118, Rue des Gobelins, Paris.